ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՔԻՉ ԺԱՄԱՆԱԿ Է ՄՆՈՒՄ

Հուլիսի 29-ին Լաս-Վեգասում (Նեվադայի նահանգ, ԱՄՆ) մեկնարկում է ՖԻԴԵ-ի աշխարհի երկրորդ առաջնությունը, որն անցկացվելու է «նոկաուտ համակարգով», այսինքն՝ պարտվող շախմատիստն անմիջապես դուրս է մնալու հետագա պայքարից:



Առաջնությանը մասնակցելու են 100 ուժեղագույն շախմատիստներ, որոնցից 72-ը այդ իրավունքը նվաճել են փնջային մրցումներում, իսկ 28-ը որոշվել են բարձր վարկանիշով:

Լաս-Վեգասում հանդես են գալու նաեւ Հայաստանը ներկայացնող երեք շախմատիստներ՝ Վլադիմիր Հակոբյանը, Կարեն Ասրյանը եւ Լեւոն Արոնյանը: Լոզանում տեղակայված ՖԻԴԵ-ի շտաբ-բնակարանում անցկացված վիճակահանության արդյունքներով առաջին փուլում նրանք կազմել են հետեւյալ զույգերը. Էդուարդաս Ռոզենտալիս (Լիտվա, գործակիցը՝ 2577)-Լեւոն Արոնյան (2502), Վլադիմիր Հակոբյան (2640)-Մայա Չիբուրդանիձե (Վրաստան-2551), Կարեն Ասրյան (2576)-Անդրես Ռոդրիգես (Ուրուգվայ-2500):

Շախմատի միջազգային Ֆեդերացիան հրապարակեց համաշխարհային դասակարգման նոր ցուցակը: Թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց մեջ թիվ մեկ գրոսմայստերների փոփոխություն չի գրանցվել: Ստորեւ ներկայացնում ենք 10-ական ուժեղագույններին ցանկը եւ նրանց անհատական գործակիցները:

Տղամարդիկ

1.	Գարրի Կասպարով (Ռուսաստան)	2851
2.	Վիշվանաթան Անանդ (Հնդկաստան)	2771
3.	Վլադիմիր Կրամնիկ (Ռուսաստան)	2760
4.	Ալեքսանդր Մորոզեւիչ (Ռուսաստան)	2758
5.	Ալեքսեյ Շիրով (Իսպանիա)	2734
6.	Բորիս Գելֆանդ (Իսրայել)	2713
7.	Անատոլի Կարպով (Ռուսաստան)	2709
8.	Մայքլ Ադամս (Անգլիա)	2708
9.	Վասիլի Իվանչուկ (Ուկրաինա)	2702
10.	Պետեր Լեկո (Հունգարիա)	2701

Կանայք

1.	Յուդիթ Պոլգար (Հունգարիա)	2671
2.	Ալիսա Գալյամովա (Ռուսաստան)	2556
3.	Մայա Չիբուրդանիձե (Վրաստան)	2551
4.	Սե Ցզյուն (Չինաստան)	2528
5.	Նանա Իոսելիանի (Վրաստան)	2504
6.	Պիա Կրամլինգ (Շվեդիա)	2504
7.	Չեն Չժու (Չինաստան)	2503
8.	Սոֆիա Պոլգար (Հունգարիա)	2500
9.	Եկատերինա Կովալեւսկայա (Ռուս.)	2497
10.	Ալիսա Մարիչ (Հարավսլավիա)	2489